



# Բովանդակություն

1. Համառոտագիր .....	3
1.1 Նկարագրական .....	3
1.2 Ջարգացման հեռանկար .....	5
1.3 Շուկային նկարագրություն .....	5
2. Կազմակերպություն .....	7
2.1 Արփի պարկի նկարագրական.....	7
2.2 S.W.O.T. վերլուծություն .....	7
2.3 Ապրանքներ/ծառայություններ.....	14
3. Շուկան .....	18
3.1 Առանձնահատկություն.....	18
3.2 Գնորդներ.....	18
3.3 Մրցակիցներ .....	20
3.4 Շուկայի վերլուծություն .....	20
3.5 Թիրախային շուկաներ.....	22
3.6 Մարքեթինգային ռազմավորություն .....	22
Եզրակացություն.....	23

# 1. Համառոտագիր

## 1.1 Նկարագրական

«Արփի լիճ ազգային պարկ» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ պարկ) ստեղծման մասին որոշումը ընդունվել է 2009թ, սակայն ենթակառուցվածքների ստեղծման հետ կապված պարկը գործունեությունը սկսել է 2014թ-ից: Պարկի տարածքը ներառում է Արփի լճի հարակից շրջանները (տես՝ Հավելված 1): Պարկի նպատակն է իրականացնել պարկի տարածքում առկա կենդանական և բուսական աշխարհի, պատմական հուշարձանների պահպանությունն ու պաշտպանությունը:

Ըստ պարկի կանոնադրության տարածքը բաժանված է 3 տարածագործառնական գոտիների՝

- արգելոցային,
- ռեկրեացիոն,
- տնտեսական:

Աշխատանքների կազմակերպման համար պարկում առկա են հետևյալ ենթակառուցվածքները և միջոցները՝

1. Տեղեկատվական կենտրոն Ղազանչի գյուղի տարածքում, որտեղ իրականացվում է պարկ այցելող զբոսաշրջիկների դիմավորումը և ուղորդումը պարկի գրասենյակ:
2. Պարկի գրասենյակ Պաղակն համայնքի տարածքում, որտեղ տեղակայված են պարկի աշխատակազմի տրամադրության տակ գտնվող հիմնական միջոցները:
3. Տեխնիկական միջոցներ՝
  - Ամենազնաց մեքենաներ,
  - Տրակտոր,
  - Վրաններ,
  - Լուսարձակներ,
  - Հեռադիտակներ,
  - Ռադիոկապի համակարգեր:
4. Գրասենյակի տարածքում առկա է հյուրատուն, ինչպես նաև գրասենյակային մասնաշենքում սարքավորված են գիշերակացի համար սենյակներ:

Չնայած միջոցների առկայությանը՝ պարկի տարածքում տուրիստների հոսքը այնքան էլ մեծ չէ, ինչը կապված է մի շարք խնդիրների հետ.

### 1. Անձնակազմի պահանջվող որակավորման ցածր մակարդակ:

Առկա անձնակազմի որակավորումը բավարար չէ զբոսաշրջիկների դիմավորումը, ուղեկցումը և կեցությունը ապահովելու համար: Ղազանչի համայնքում գտնվող տեղեկատվական կենտրոնից սկսած՝ մինչև պարկի տարածքում գործող ծառայությունները կարգավորող անձնակազմի կարողությունները ենթակա են զարգացման՝ օտար լեզվի իմացություն, սպասարկման որակ և այլն: Մանավանդ տեղեկատվական կենտրոնի անձնակազմը շատ կարևոր է, քանի որ նրանք են ապահովում առաջին շփումը զբոսաշրջիկների հետ և նրանց որակյալ աշխատանքից է կախված, թե ինչքանով կենտրոն այցելած զբոսաշրջիկները կօգտվեն պարկի առաջարկած ծառայություններից:

**2. Տեղեկատվական կենտրոնն իր ֆունկցիան չի կատարում:**

Տեղեկատվական կենտրոնը չի գործում որպես առաջնային և շահադրոդ տեղեկատվություն տվող կառույց, և դրա գործունեության մասին ոլորտում շատ քիչ տեղեկացվածություն կա, այդ մասին են վկայում տուրիստական կազմակերպությունների շրջանում մեր կողմից իրականացված հարցումները:

**3. Պարկի տարածքում ծառայություններ մատուցելու ներուժը ապրանքայնացված չէ:**

Տարածքում կատարված դիտարկումների և լճի շրջակայքով կատարված ավտոտուրից հետո պարզ դարձավ, որ տարածքը ունի էկոտուրիզմի և տուրիստական այլ գործունեության հսկայական ներուժ, որը կարելի է վերածել այդ ոլորտի ծառայությունների: Մեր դիտարկումներից պարզ դարձավ նաև, որ առկա և հնարավոր ծառայությունների մշակումը, շուկայում դիրքավորումը և տուրիստական գործակալություններին ներկայացումը շատ ցածր մակարդակի վրա է:

- Նախ, առկա ներուժի հետ համեմատած պարկի կողմից առաջարկվող ծառայությունները բավականին քիչ են (օրինակ, վրանների և քնապարկերի վարձույթ), իսկ դրանց վերաբերվող տեղեկատվությունը՝ խիստ սահմանափակ: Առկա են միայն առաջարկվող ծառայությունների գնացուցակները, բացակայում են այդ ծառայությունները նկարագրող տպագիր և մեդիա նյութերը:
- Ծառայությունների դիրքավորումը շուկայում ևս շատ կարևոր է, քանի որ ներկայիս սահմանափակ ծառայությունների վերաբերյալ անգամ, ոչ համացանցում, ոչ տուրիստական գործակալություններում տեղեկատվություն չկա կամ շատ քիչ է: Անհրաժեշտ է և՛ առկա, և՛ ապագայում մշակվող ծառայությունները հստակ դիրքավորել շուկայում, նրանց մասին տեղեկատվությունը ինչպես հասանելի դարձնել ներքին, այնպես էլ արտաքին տուրիստների համար:

**4. Տեղաբնակները շահագրգռված չեն տարածքում տուրիզմի զարգացմամբ:**

Տեղաբնակները ներգրավված չեն պարկի կողմից իրականացվող աշխատանքներում: Գլոբալ առումով նրանք չեն պատկերացնում պարկի զարգացումից կամ պարկում առկա հնարավորություններից ինչ տնտեսական օգուտ իրենք կարող են ունենալ: Այստեղ շատ կարևոր է տեղաբնակների մոտ արմատացնել այն գիտակցությունը, որ պարկի տարածքում էկոհամակարգի պահպանությունը հետագայում իրենց հնարավորություններ կտա ստանալ եկամուտներ այցելող տուրիստներին ծառայություններ մատուցելով: Շատ կարևոր նշանակություն ունի նաև ագրոտուրիզմի առկայությունը պարկի կողմից առաջարկվող ծառայությունների փաթեթներում:

**5. Այցելող զբոսաշրջիկների համար առկա ծառայությունները սահմանափակ են և պարկի տարածքում այցելուի համար խիստ սահմանափակ հնարավորություններ կան վճարովի ծառայություններից օգտվելու:**

Ներկա պահին առկա ծառայությունները հնարավորություն չեն տալիս զբոսաշրջիկներին գումար ծախսել պարկի տարածքում, որն իր հերթին սահմանափակում է պարկի ֆինանսատնտեսական հնարավորությունները, որն էլ իր հերթին խոչընդոտ է հանդիսանում պարկի տարածքում հավելյալ ներդրումներ իրականացնելու հարցում:

## 6. Համագործակցությունը մասնավորապես Վրաստանի հատվածի հետ թույլ է կամ չկա:

Չնայած նրան, որ պարկը ստեղծված է երեք պետությունների՝ Հայաստանի Հանրապետություն, Վրաստանի Հանրապետություն, Թուրքիայի Հանրապետություն տարածքում՝ նրանց միջև համագործակցությունը կախված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից՝ բավականին թույլ է: Մասնավորապես, քանի որ Հայաստան-Վրաստան տուրիստական ճանապարհը անցնում է Բավրայի անցագրային կետով, շատ կարևոր է զբոսաշրջիկների երկուստեք ուղղորդումը Հայաստանից Վրաստան և հակառակը:

### 1. 2 Զարգացման հեռանկար

Պարկում առկա հսկա պոտենցիալը, որը լավ ապրանքայնացված չէ, հնարավորություն է ստեղծում մեծացնել պարկի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը, ներգրավել ավելի շատ զբոսաշրջիկներ: Մինևույն ժամանակ ներգրավել տարածքում ապրող բնակիչներին կենդանական և բուսական աշխարհի պահպանության գործում: Տարածքի զարգացման գլխավոր գրավականը էկոտուրիզմի մասին տարածքում ապրող բնակիչների գիտելիքների բարձրացումն է, դրա միջոցով նրանց տնտեսական գործունեության խթանումը և զբոսաշրջիկներին բնության պահպանության աշխատանքներում ներգրավվելը: Հարկ է նշել նաև, որ վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում պարկի ենթակառուցվածքների զարգացմանը, որը ևս հանդիսանում է ապագայի հեռանկարի լավ գրավական: Հեռանկարային է նաև միացյալ հայ-վրաց-թուրքական պարկերի միասնական մեկ էկոմիջավայր դիտելու միջազգային կազմակերպությունների հետաքրքրվածությունը, որը էկոմիջավայրի զարգացման միացյալ ծրագրերից գատ կարող է նաև սահմանային երկխոսության լավ հարթակ դառնալ:

### 1. 3 Շուկայի նկարագրություն

Նախ և առաջ կարևոր է հասկանալ՝ ինչ է էկոտուրիզմը և ինչ տարբերություններ ունի սովորական զբոսաշրջության հետ համեմատ:

Էկոտուրիզմը պատասխանատու շրջագայություն է, որը պահպանում է բնությունը և նպաստում տեղաբնակների կենսապայմանների բարելավմանը: Տուրիզմի ավանդական ձևերը կայուն չեն, հաճախ միտված չեն բնության պահպանությանը և ասոցացվում են մեծ հոյուրանցների հետ, որը էկոտուրիզմի պարագայում բացակայում է:

Էկոտուրիզմով հետաքրքրված զբոսաշրջիկների համար շատ կարևոր է ինքնուրույն շրջագայելու հանգամանքը: «Brieu et al» 2011 թ.-ին պարզել է, որ շրջակա միջավայրի հանդեպ հարգանքը գլխավոր մոտիվացնող գործոններից մեկն է էկոտուրիզմով հետաքրքրվող մարդկանց համար: Բացի այդ, 2009 թ.-ին «Պրիմ-Ալլազը» նաև պարզել է, որ ճանապարհորդության և կարճ շրջագայության ընթացքում ուսումնական հնարավորությունների՝ (learning opportunities) առկայությունը նույնպես կարևոր նշանակություն ունի այս տեսակի ճանապարհորդների համար:

Կարևոր է նշել, որ այդ գնումները կատարելու համար խոչընդոտներ կան: Միջին վիջակագրական էկոտուրիստը շատ լավ պատկերացնում է գների ձևավորումը,

տարբերակում է կեղծ գովազդը և ապատեղեկատվությունը<sup>1</sup>: Բացի այս 1991թ.-ին Լինդբերգը հայտնաբերեց, որ զբոսաշրջության համար երկրորդ խոշորագույն խոչընդոտը պարկերի կողմից սահմանափակումները, կանոնները և կանոնակարգերն էին, որոնք սահմանված էին հյուրերի համար և նպատակ ունեին պահպանել բնական միջավայրը:

Շուկան մրցակցային է, սակայն ազգային պարկերի և պահպանվող տարածքների մեջ մեծ մրցակցություն չկա և ավելի շատ մասնավոր հատվածն է շուկայում գործունեություն ծավալում:

---

<sup>1</sup> Lecompte et al., 2011 ; Boivin et al., 2011 ; Durif et al., 20 11

## 2. Կազմակերպություն

### 2. 1 Արփի պարկի նկարագրական

«Արփի լիճ» ազգային պարկը» ստեղծվել է 2009թ. -ին և նպատակ ունի Արփի լճի տարածքում գտնվող բուսականությունն ու կենդանական աշխարհը, մասնավորապես էնդեմիկ և կարմի գրքում գրանցված տեսակներին պահպանել և ապահովել նրանց բազմացումը:

Պարկի տարածքում ստեղծված են որոշակի ենթակառուցվածքներ՝

1. Պարկի գրասենյակ
2. Տեղեկատվական կենտրոն
3. Մեղվապահության կենտրոն

Պարկի տարածքում պահպանությունը իրականացվում է ռենջերների միջոցով, ովքեր կապված տեղանքի առանձնահատկություններից պահպանությունը իրականացնում են մեքենայով կամ ձիերով:

### 2. 2 S.W.O.T. վերլուծություն

Տարածքի սվոթ վերլուծությունը հիմնված է փորձագիտական ֆոկուսխմբային քննարկման, հետազոտական թիմի իրականացրած հետազոտական աշխատանքների և զբոսաշրջիկների կողմից արտահայտած կարծիքների հիման վրա:

SWOT վերլուծության իրականացման ժամանակ առանձնացվել են երկու հիմնական տեսանկյուն:

1. Էկո-մշակութային տեսանկյունից,
2. Զբոսաշրջիկներին սպասարկելու տեսանկյունից:

### Էկո-մշակութային տեսանկյունից

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>• Պաղակն – ամենացուրտ բնակավայր ՀՀ-ում</li> <li>• Ախուրյանի կիրճ</li> <li>• Մարգագետնային եզակի դաշտ:</li> <li>• 120-150 տեսակի թռչուն</li> <li>• 189-ից ավել բուսատեսակներ /19-ը Կարմիր գրքում/</li> <li>• Վիշապաքարեր</li> <li>• Տարբեր մշակույթների մարդիկ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բնակչության կրթական մակարդակը</li> <li>• Մարդկային ռեսուրսների խնդիր /կարողություններ/</li> <li>• Պարկի շենքի հեռավորությունը կղզուց, որը խանգարում է որոշ ծառայությունների մատուցմանը</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>• Դարիկի տոհմաբուծարան</li> <li>• Մեզալիթյան քարեր</li> <li>• Լուսադրյուրի ջուր</li> <li>• Գորշաբերդ /Բոզդալի ձոր/ - կամուրջ,</li> <li>• Շրջակա բնակավայրերի առկայություն</li> </ul>	
<p><b>Հնարավորություններ</b></p>	<p><b>Սպառնալիքներ</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Հեծանվային արշավ</li> <li>• Ձիարշավ</li> <li>• Ֆոտոոռս</li> <li>• Ձմեռային տուրիզմ</li> <li>• Ձմեռ պապի տան իմիջ</li> <li>• Դիտակետեր, լանդշաֆտ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ձմեռային բուքեր</li> <li>• Էկոլոգիական աղետներ</li> </ul>

Անդրադարձ կատարենք էկո-մշակութային ուղղության ուժեղ և թույլ կողմերին: Մասնավորապես պարկի ուժեղ կողմերից կարող ենք նշել ալպյան մարգագետինների կարևորությունը, եզակի կենսաբազմազանության առկայությունը (կան մոտ 120-150 տեսակի թռչուն, 189-ից ավել բուսատեսակ, որից 19-ը գրանցված է Կարմիր գրքում), դրա հիման վրա ֆոտոոռսերի իրականացումը, Հայաստանի հյուսիսում գտնվելու և Ցուրտավ լեռան (հայկական ձմեռ պապի՝ Կաղանդ պապի բնակավայրը) առկայության փաստը, որը կարող է խթանել ձմեռային տուրիզմի զարգացումը, կարող է տարածքում ձմեռ պապի տուն կառուցվել, կան նաև մոտ 300 հա տարածք գրավող փշատերև անտառներ:

Թույլ կողմերի մեջ հատկանշական է մարդկային ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրը, որը վերաբերում է ն՝ Արփի պարկին, ն՝ հարակից համայնքների բնակչությանը: Պարկում անհրաժեշտ է հստակեցնել աշխատանքի բաժանումը, աշխատողների պարտավորություններն ու իրավունքները, առկա է աշխատակիցների վերապատրաստման անհրաժեշտություն՝ ծառայությունների մատուցման որակի բարելավման, սպասարկման քաղաքականության մշակման համար: Իսկ ինչ վերաբերում է համայնքի բնակիչներին, ապա նրանց մոտ առկա է կարծրացած մտածելակերպ, որի պատճառով էլ դժվարությամբ են ընդունում միջավայրում կատարվող փոփոխությունները: Թույլ կողմ կարելի է համարել նաև այն, որ ծառայությունների մշակման դեպքում պետք է հաշվի առնել տարածքի բնապահպանական նշանակությունը, տարածքում ծառայությունների մատուցման դեպքում կղզուց եղած հեռավորությունը:

Տարածքի գրավչության բարձրացման լուրջ խնդիր կա, որպես այդպիսին պարկի ճանաչվածության մակարդակը ցածր է, տուրիստների հոսքը՝ քիչ:

Որպես այդպիսին հնարավորությունների մեջ առանձնացվեցին մի շարք պատմամշակութային արժեքներ, ինչպիսիք են վիշապաքարերը (Դարիկի, Մեծ Մեպասարի), Գորշաբերդը, Նիկոլայ 1-ին ցարի անունը կրող կամուրջը, մեզալիթյան քարերը, ողջ



բնապատկերը տեսնելու համար մի քանի դիտակետների ավելացման հնարավորությունը, Դարիկի տոհմաբուծարանը (բուծվում են ձիեր, շներ և ցլեր), ձիարշավների և հեծանվային արշավների կազմակերպումը (քանզի բուսածածկույթը նման դեպքերում վնասներ կարող է կրել նորմատիվային սահմաններում, ի տարբերություն ջիպ տուրերի):

### Զբոսաշրջիկներին սպասարկելու տեսանկյունից

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>• Հյուրատուն /մինչև 10 հոգի/</li> <li>• B&amp;B</li> <li>• 12 քնապարկ, 6 վրան</li> <li>• Տիկին Ադուն</li> <li>• Ամենագնաց մեքենաներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ձկնորսական իրերի բացակայություն</li> <li>• Ցուցանակների բացակայություն</li> <li>• Դահուկների, մոտորասահնակների բացակայություն</li> <li>• Մակույկների բացակայություն</li> <li>• Բավրայի անցակետից Արփի պարկ ճանապարհների անանցանելիություն ձմռանը</li> </ul>
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ul style="list-style-type: none"> <li>• Ձիով սահնակ (բարելավում)</li> <li>• Շնասահնակ</li> <li>• Փոքր թանգարան /կենցաղի/</li> <li>• Հյուղակներ</li> <li>• Մրցույթներ</li> <li>• Ազգային ճաշատեսակներ</li> <li>• Սահմանամերձ</li> <li>• Վարձիայի տուրիստներ /Բորժումի/</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ճանապարհների փակ լինելը</li> <li>• Գայլեր</li> <li>• Սահմանին մոտ լինելը</li> </ul>

Ենթակառուցվածքային ուղղության տեսանկյունից ուժեղ կողմեր են Վարչական շենքում և Ղազանչիում գտնվող այցելուների կենտրոնում գիշերակացի ապահովումը, Արդենիսում բնակվող Շաքրոյի հյուրատունը, համայնքում առկա որոշ B&B-ները, պարկի տրամադրության տակ եղած քնապարկերն ու վրանները (կարևոր նախապայմաններ քեմփինգի համար), ձիերով սահնակները:

Ճիշտ է ինչ-որ տեղ գիշերակացն ապահովված է, սակայն այն հեռու է բավարար համարվելուց, ինչպես պարկի տարածքում, այնպես էլ համայնքներում: Որոշ համայնքներում կան վերանորոգման կարիք ունեցող B&B-ներ, անհրաժեշտ է կառուցել նաև նորերը՝ սոցիալ-տնտեսական լարվածությունը թեթևացնելու համար: Արփի համայնքը տարատեսակ մշակույթներ կրող համայնք է համարվում, յուրաքանչյուր համայնքում կարելի է գտնել տարբեր ու յուրօրինակ կենցաղի տեր մարդկանց, զգացվում է նաև Ջավախքի շունչը, սակայն այս ամենը համընդհանուր ներկայացված չէ (կարելի է փոքրիկ կենցաղի

թանգարան կառուցել): Վարչական շենքը այցելուներին ձկնորսական պարագաներ է տրամադրել որպես ծառայություն, սակայն դրանք վատթար վիճակում են: Մյուս թույլ կողմը վերաբերում է պարկի ներկայացվածության ապահովման ցածր մակարդակին՝ տեղեկատվական ցուցանակները բացակայում են, ծառայությունների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության ապահովման խնդիր կա:

Հնարավորություն կարող է տալ Դարիկի տոհմաբուժարանը՝ ձիով սահնակների բարելավման և շնասահնակների՝ որպես ծառայության կիրառման հարցում: Հնարավորություն են նաև տարածքում առկա քարերն ու փայտի կտորները, որոնք կարող են բարձրացնել տարածքի գեղագիտական գրավչությունը (կարելի է հյուղակներ, տաղավարներ, շավիղներ և նման հետաքրքիր բաներ կառուցել), կազմակերպել տարատեսակ մրցույթներ, ազգային ճաշատեսակների (Օր.՝ Ջավախքի) մենյու պատրաստել՝ լուծում տալով սննդի ապահովման հարցին:

Սպառնալիքների մեջ դարձյալ ընդգծվում է ձմեռային բուքերի պատճառով ճանապարհների փակման վտանգը, գայլերի բնակավայրեր մուտք գործելը, Թուրքիայի սահմանին մոտ լինելը:

### **Արշավի (քեմփինգի) ամփոփագիր**

Փորձագիտական գնահատականից բացի SWOT վերլուծությանը կցվել է զբոսաշրջիկների խմբի կողմից կազմված ակնարկը, որը ներկայացված է ստորև:

### **Ակնարկ**

#### **I. Տրանսպորտ**

#### **Առավելություններ:**

Մեր միկրոավտոբուսի վարորդը տեղացի էր, ուստի գիտեր ինչպես հասնել Արփի լիճ: Ազգային պարկում աշխատակազմը մեզ դեպի քեմփինգի վայր ուղեկցեց:

#### **Թերություններ:**

Հաշվի առնելով այն, որ չկարողացանք գտնել Արփի տանող որևէ հանրային տրանսպորտ՝ միկրոավտոբուս վարձեցինք մեզ տանելու և հետ բերելու համար: Ճանապարհին նկատեցինք, որ ազգային պարկ տանող ուղին բարեկարգ չէ և գուրկ է ցուցանակներից: Միկրոավտոբուսը ազգային պարկի տարածքում դժվարությամբ էր կարողանում վարել, և թվում է, որ շատ մեքենաների համար նույնպես դժվար կլինի հասնել պիկնիկի համար նախատեսված տարածքներ, առավել ևս այն դեպքում, երբ ճանապարհը թաց է:

#### **II. Առկա հարմարություններ**

#### **Առավելություններ:**

Վարչական շենքը մեզ վրա լավ տպավորություն գործեց, այն մաքուր էր և լավ պահպանված: Պիկնիկային հատվածը, տաղավարը և սեղանը լավ վիճակում էին ու հարմար մեծ խմբերով այնտեղ ժամանակ անցկացնելու համար: Խորովածի համար նախատեսված հարմարանքը նույնպես լավ վիճակում էր: Տարածքում նաև խարույկ վառելու համար հարմարավետ հատված կար: Քնապարկերն ու ներքնակները նույնպես լավ վիճակում էին: Քնապարկերն առավել հարմար էին այդ գիշեր եղած եղանակային պայմանների համար, սակայն դրանք շատ բարակ են աշնան և գարնան համար:

**Թերություններ:**

Վրահները անհամատեղելի էին տվյալ տարածքի եղանակային պայմանների հետ և վատ վիճակում էին (պատռված զիֆերներով, քամու և ջրի նկատմամբ ոչ դիմացկուն): Քանի որ անհնար էր փակել վրահները, ողջ զիշերը մրսեցին: Պիկնիկային տարածքն աղտոտված էր: Կիսաքանդ վիճակում գտնվող կառույցներն ու ավերակներն աղավաղում էին ազգային պարկի գեղագիտական տեսքը, հատկապես՝ վարչական շենքին մոտ գտնվողները: Շենքի ներսում գտնվող ցուցատախտակները սխալ էին: Օրինակ՝ մարքետինգային բաժնի («Marketing Department») համար նախատեսված սենյակը 4 մահճակալ ունեցող ննջասենյակ էր: Մեկ այլ փոքրիկ ուղղագրական սխալ էլ կար «Headquarter» ցուցատախտակի վրա (փոխարենը գրված էր՝ «Headqarter»): Պարկը ավելի լավ վերահսկվելու կարիք ունի: Մեզ շատ էր զարմացրել այն փաստը, թե ինչու է թույլատրվում ֆերմերներին իրենց անասունների հետ ոչնչացնել պարկի տեսքը, այն դեպքում, երբ պարկում պահակներ կային: Դեռ ավելին, պահակներն անտարբեր էին տարածքի մաքրության նկատմամբ, երբ հյուրերը հեռանում են, նրանք ոչ մի ստուգում չեն անում և աղտոտողների դեմ ոչ մի լծակ չեն կիրառում, չնայած որ ունեն նրանց մասին ողջ ինֆորմացիան: Ազգային պարկում քեմիստիկ համար նախատեսված տեղերը 2-ն էին, և պիկնիկի ու բարբեքյուրի համար նախատեսված միայն մեկը: Սա այցելուներին կարող է ստիպել իրենց բարբեքյուրն անել այն տեղերում, որոնք դրա համար նախատեսված չեն:

III. Ծառայություններ և միջոցառումներ

**Առավելություններ:**

Լճի շրջակայքում կատարված քայլարշավը շատ հաճելի էր, գրավիչ էր հատկապես մարգագետինների ու բլուրների վրայից բացվող տեսարանը: Վարչական շենքում գտնվող տեղեկատվական քարտեզը բավականին օգտակար էր:

**Թերություններ:**

Հասանելի ծառայությունների վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չունեինք, միայն հարցուփորձից հետո հասկացանք, որ կարող ենք ձիով արշավներ կատարել և կվադրացիկներ վարել: Սակայն տվյալ պահին երկու ծառայությունն էլ չէին մատուցվում: Մեզ ասեցին, որ ազգային պարկը 10 ձի ունի, որոնցից միայն երեքն են վարչական շենքին մոտ գտնվում, մինչդեռ մյուսները՝ 15 կմ հեռավորության վրա: Բացի այդ, եղած 3 ձիերն էլ պիտանի չէին ձիավարելու համար, որովհետև դրանցից մեկը հիվանդ էր, մյուսը ձագ էր ունեցել, իսկ մյուսը նոր էր ծնվել ու դեռ փոքր էր: Մենք չկարողացանք կվադրացիկներ վարել միայն այն պատճառով, որ ավտոտնակի բանալին աշխատողների մոտ չկար: Մեծ թերություններից էր նաև լողալու հետ կապված անհստակությունը: Որոշ տարածքներում հստակ ասված էր, որ լողալն արգելվում է (միայն հայերեն), իսկ մյուսներում ոչ մի ցուցանակ չկար: Բայց և այնպես նկատեցինք այլ լողացող մարդկանց և որոշեցինք միանալ նրանց: Ազգային պարկը ոչ մի սնունդ չի առաջարկում:

IV. Հաճախորդի սպասարկում

**Առավելություններ:**

Աշխատակազմը շատ բարեհաճ էր և ուշադիր: Գնահատելի էր այն, որ նրանք օգնեցին կրակ անելու համար փայտ հավաքելիս:

**Թերություններ:**

Կարծում ենք, որ մեր նկատմամբ նրանց ունեցած ուշադիր վերաբերմունքը կապված էր նրանց հետ եղած մեր ընդհանուր կապի հետ: Աշխատակազմը չէր տիրապետում

հաճախորդին սպասարկելու մոտեցումներին: Մենք չգիտեինք, թե ինչ ծառայություններ են մատուցվում այնտեղ:

## V. Գներ

Մուտքն ազգային պարկ ազատ էր: Բացի այդ, մենք մեծ զեղչեր ստացանք: Ընդհանուր առմամբ, գները ողջամիտ էին:

Բարելավման կարիք ունեցող ոլորտները.

### I. Տրանսպորտ

Արփի լիճ հասնելու համար առավել մանրամասն տեղեկատվություն ունենալու կարիք կա, առավել ևս այն դեպքում, երբ Գյումրին ամենամոտ տրանսպորտային կապող օղակն է: Ընկերությունների կողմից մի քանի գովազդները կարող են լավ սկիզբ լինել: Որոշ տաքսի ընկերություններ կարող են ցուցակագրվել ազգային պարկի պաշտոնական կայքէջում, իսկ պարկը կարող է որպես փոխհատուցում որոշ ուղեվճարներ ստանալ: Արփի լիճ տանող ճանապարհները ավելի շատ ցուցանակների կարիք ունեն: Վարչական շենքից դեպի քեմփինգային վայրեր տանող ճանապարհները պետք է բարեկարգվեն, որպեսզի անցանելի լինեն սովորական մեքենաների համար (հակառակ դեպքում միշտ ռենջերների օգտագործման կարիք կլինի):

### II. Առկա հարմարություններ

Առաջարկում ենք ավելի շատ պիկնիկային և քեմփինգային տարածքներ կառուցել, որոնք ունենալու են աղբարկղեր և զուգարաններ: Բայց դրանք իրար մոտ կառուցելու անհրաժեշտություն չկա, որպեսզի յուրաքանչյուրն առանձին վայելի իր հանգիստը: Պահակները պարկը ավելի լավ պահպանելու համար վերապատրաստման կարիք ունեն, ինչպես նաև ֆերմերներին իրենց անասուններով լճի տարածք մուտք գործելու և աղտոտելու արգելման համար: Պարկը, ինչպես նաև քեմփինգային տարածքները մաքրության կարիք ունեն՝ հյուրերին և տուրիստներին օրինակելի լինելու և շրջակա միջավայրի պահպանության և էկո-տուրիզմի վրա շեշտը դնելու համար:

### Աղբահանության խնդրի լուծման ուղիներ՝

Պետք է տեղադրվեն ավելի շատ աղբամաններ, կամ եղածները ավելի կանոնակարգված ու հաճախակի պիտի դատարկվեն: Պահակները պետք է հասկացնեն տուրիստներին, որ իրենք պատասխանատու են մաքրության պահպանման համար, և եթե նրանք չանեն ինչպես կարգն է, կտուգանվեն: Պարկը տարածքն աղտոտողների համար տուգանքներ պիտի սահմանի (օր.՝ 10 000 դրամ): Հաշվի առնելով, որ տուրիստներից պահանջվում է ցույց տալ ազգային նույնականացման քարտերը (ID) (համենայնդեպս ինձանից պահանջեցին խմբի համար), ավելի է հեշտանում աղտոտողներին հետևելը: Վարչական շենքում առկա ցուցանակները թարմացման կարիք ունեն:

### III. Ծառայություններ և միջոցառումներ

Մատուցվող ծառայությունների տեղեկատվության ստացման կարիք կա: Առաջարկում ենք մուտքի մոտ տեղեկատվական տախտակ տեղադրել: Մեծ առավելություն կլինի, եթե

լողալու համար առանձին հատված նշագծվի կամ ուղղակիորեն հստակ ասվի, որտեղ է լողալը թույլատրվում, և որտեղ՝ արգելվում: Քայլարշավային փորձը կարող է զարգանալ ցուցանակների տեղադրմամբ, որոնք ցույց կտան տուրիստական ուղիները և պարկի, նրա ֆլորայի ու ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը: Տեղեկատվական քարտեզները պետք է ինֆորմացիա պարունակեն նաև առկա ավերակների պատմության և այդ վայրերի մասին եղած լեգենդների վերաբերյալ: Ձիերի հետ կապված խնդիրը նույնպես արմատական փոփոխության կարիք ունի: Առաջարկում ենք ծառայության հասանելիության ապահովման համար ձիերին շենքին մոտ տարածքում պահել: Առաջարկում ենք նաև, որ պարկում հանրային սնունդ լինի: Պարտադիր չէ, որ շուրջօրյա աշխատող ճաշարան լինի, բայց փոխարենը կարող է պատրաստի սենդվիչներ և նախուտեստներ վաճառող փոքրիկ խանութ լինել: Նույնիսկ վենդինգ մեքենան կարող է լավ սկիզբ լինել: Աշխատողները պետք է հասանելիություն ունենան ավտոտնակի բանալիներին: Բացի այդ, առաջարկում ենք ունենալ ևս մեկ կվադրագիկ՝ խմբերին միասին վարելու հնարավորություն տալու համար:

#### **IV. Հաճախորդի սպասարկում**

Վարչական շենքում ընդունարան չկար: Մուտքի մոտ առկա պահակները կապի մեջ չէին ներս մտնող տուրիստների հետ և չէին տիրապետում տուրիստին ողջունելու մոտեցումներին՝ հույսները դնելով վարչական շենքից դուրս եկող աշխատողների վրա: Առաջարկում ենք պահակակետը փոխարինել տուրիստների համար նախատեսված ընդունարանով՝ հաճախորդին սպասարկելու և պարկում մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն տալու համար: Մենք բացառապես անտեղյակ հեռացանք: Աշխատակազմը պետք է ակտիվորեն գովազդի մատուցվող ծառայություններն ու միջոցառումները, պատմի Արփի լճի և շրջակայքի վերաբերյալ պատմությունը: Աշխատակազմը հաճախորդի սպասարկմանն ուղղված վերապատրաստման կարիք ունի: Ազգային պարկը պետք է բարձրացնի հատուկ պատասխանատվություն ունեցող յուրաքանչյուր աշխատակցի հաշվետվողականության մակարդակը:

#### **V. Գներ**

Առաջարկում ենք յուրաքանչյուր անձի համար օրինակի համար 500 դրամ մուտքավճար սահմանել: Բացի այդ, առաջարկում ենք ելքի մոտ նվիրատվությունների արկղ (donation box) տեղադրել, որպեսզի իրենց այցելությունից հաճույք ստացած այցելուները ազգային պարկի պահպանման գործում իրենց լուրման ներդնեն:

#### **Եզրակացություն**

«Արփի լիճ» ազգային պարկը իր գրավիչ տեսարանների և հարուստ կենսաբազմազանության շնորհիվ էկո-տուրիզմի մեծ պոտենցիալ ունի, չնայած որ նման կենտրոն դարձնելու համար բազմաթիվ աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն կա: Այնուամենայնիվ, էկոլոգիական միջավայրի պահպանումը առաջնային պիտի լինի պարկի համար՝ հանուն առկա կենսաբազմազանության և պարկի յուրօրինակության: Ի վերջո, կարծում եմ, որ պարկի զարգացման մեջ մասնավոր հատվածի (տեղի ֆերմերներ, ռեստորանների և բիստրոների սեփականատերեր, խանութպաններ և այլն) ընդգրկումը կարող է վճռական լինել:

## 2. 3 Ապրանքներ/ծառայություններ

«Արփի լիճ» ազգային պարկն ունի.

1. Ճամբարակայան,
2. Հյուրատուն,
3. Գույք վրանային ճամբարներ անցկացնելու համար,
4. Ձիեր՝ ձիարշավի համար,
5. Ուղեկցող մեքենա կարող է տրամադրել,
6. Խոհանոցը նախատեսված է ինքնասպասարկման համար:

Նոր ծառայությունների ավելացումն ու իրականացումը կարելի է դիտարկել ինչպես «Արփի լիճ» ազգային պարկի կողմից մատուցվող ծառայություն, այնպես էլ հարեւան համայնքների զարգացման կարելուր նախադրյալ՝ համագործակցելու սկզբունքով:

Այցելուների համար կարելի է ունենալ.

1. Օրինակելի անասնազոմ, որն իր մեջ կունենա հետեւյալ ծառայությունները.
  - Կովի կթում,
  - Մածունի մերում,
  - Անասունների կերակրում,
  - Աշխատանքի դիմաց բնամթերքով վարձատրում:
2. Խոտաբույսերի փաթեթավորում և վաճառք:
  - Խոտաբույսերի հավաքում և հանձնում ընդունման կետ համայնքի բնակիչների անմիջական օգնությամբ եւ վերահսկողությամբ:
3. Ձկնորսություն Ախուրյան գետի վերին հոսանքում.
  - Ձկնորսական պարագաների տրամադրում,
  - Ձկնորսության վարպետաց դաս, որի մեջ կարելի է ներգրավել հարեւան համայնքների երեխաներին ու երիտասարդներին,
  - Ձկնորսության մրցումներ:
4. Թռչունների դիտում հեռադիտակների միջոցով:
5. Գյուղական սննդի օր.
  - Տեղական ուտեստներով սննդի տոնավաճառ, որը կներկայացվի նաև շրջակա գյուղերի բնակիչների կողմից,
  - Տեղական էկոսննդի ապահովում ազգային պարկի տարածքում՝ ջերմոցների շահագործման պարագայում:
6. Վիշապաքարերի դիտում:
7. Ավտո Էքսորիմ շրջան պարկի այն հատվածներում, որտեղ մարդկային գործոնով պայմանավորված վնաս չի հասցվում ֆլորային եւ ֆաունային:
8. Գիշերակաց եւ գյուղական կենցաղին հաղորդակցություն (B&B).
  - Տնային պայմաններում գյուղին հատուկ պայմաններում սեփական սննդի պատրաստում:
9. Ձիարշավ:

10. Նավակների թիավարում կղզիներից ողջամիտ հեռավորության վրա.
  - Նավակների տրամադրում
  - Թիավարության մրցումներ
11. Ոտքով շրջագայություններ
  - Համապատասխան պարագաների, քարտեզների տրամադրում,
  - Ծառայությունների համակցում երթուղու ամբողջ ընթացքում:
12. Պեղումային հնարավորություններ
  - Հնագետի ծառայություն,
  - Պեղումների վերաբերյալ նվազագույն գիտելիքների տրամադրում,
  - Գործիքների տրամադրում և պեղումների կազմակերպում:
13. Գիդ-ուղեկցորդների ծառայություն:
14. Խոտքաղ:
15. Շոգեբաղնիք սառցե լճի ափին:
16. Տարածքում կազմակերպել լողալու հնարավորությամբ ափի ստեղծում եւ հանգստացողների համար ողջ տարին ունենալ լողանալու հնարավորություն՝ ցանկության դեպքում:

#### Անելիքներ

1. Ճշտել ձկնորսության հարմար վայրերը, հրապարակել ձկնորսության թույլատրելի ժամանակացույցը,
2. Դիտակետերի պատրաստում և տեխնիկական զինում
3. Տեղական ուտեստների ցանկի տրամադրում այցելուներին
4. Պարբերաբար տուրիստական ընկերությունների ներկայացուցիչների այցի կազմակերպում ազգային պարկ,
5. Արժեքային շղթաների կառուցում այցելու-համայնքի բնակիչ-բնություն սխեմայով,
6. Տարածքում առկա խոտաբույսերի ցանկի կազմում, դրանց օգտակար հատկանիշները բնուագրող տեղեկատվական թերթիկի պատրաստում,
7. Մեղր քաշելու գործընթացի կազմակերպում եւ մեղրի համտեսումն ու գնումը դարձնել արժեքային շղթայի մաս,
8. Կազմել Արփի լիճ ազգային պարկի տաս օրենքները /պատվիրանները/,
9. Տարածքում ունենալ Ձմեռ պապի տուն կամ ներկայացուցչական ինչ-որ բան, որ կխորհրդանշի Կաղանդ պապի ներկայությունն այդտեղ,
10. Համագործակցել հեծանվային սիրողական խմբերի հետ՝ տեղում միջոցառումների կազմակերպման կամ հեծանիվների վարձակալության հետ կապված հարցերով: Նպաստել հեծանվային արշավների ավելի հաճախ կազմակերպելու գործին:
11. Ձիարշավները ձմեռային ամիսներին փոխարինել ձիով սահնակներով ճամփորդելու, տուրերի հնարավորություն ունենալ:

## ***Զբոսաշրջիկների համար առանձնացված երթուղիներ***

### **1. Երթուղի 1. «Արփի լիճ»**

- Վարչական շենք, Պաղակն համայնք
- Ծաղկուտ համայնք
- Գառնառիճ համայնք
- Շաղիկ համայնք, անտառապատ տարածքներ «Գայլի դարպասներ» եւ երկու այլընտրանքային շարունակություն՝ հետ դեպի վարչական շենք (Պաղակն համայնք) կամ Զառիշատ համայնք (երթուղի 1ա):

Երթուղի 1-ի երկարությունը կազմում է 25.4 կմ, իսկ Երթուղի 1ա-ի երկարությունը կազմում է 24.7 կմ: Երթուղին գրավիչ է արշավների, նավարկության, ձկնորսության, բույսերի դիտման, վայրի կենդանիների դիտման, ձիարշավի եւ թռչնադիտման համար: Երթուղու տարածքում են գտնվում նաեւ երկու հանգստի տարածքներ՝ Բերդաշեն համայնքի սոճիների անտառում ու Շաղիկ համայնքի անտառապատ տարածքներում:

**Անցանելիությունը՝** հեշտ անցանելի:

### **2. Երթուղի 2. «Արդենիս լիճ եւ ջրաճահճային տարածքներ»**

- Վարչական շենք, Պաղակն համայնք
- Արդենիս համայնք (Արդենիս լիճ)
- Աղվորիկ համայնք
- Զրաճահճային տարածքներ (Ախուրյան գետի հին հուն)
- Վարչական շենք, Պաղակն համայնք

#### **Երթուղի 2ա**

- Վարչական շենք, Պաղակն համայնք
- Արդենիս համայնք (Արդենիս լիճ)
- Զրաճահճային տարածքներ (Ախուրյան գետի հին հուն)
- Վարչական շենք, Պաղակն համայնք

Երթուղի 2-ի երկարությունը կազմում է 24.7 կմ, իսկ երթուղի 2ա-ի երկարությունը կազմում է 21.3 կմ: Երթուղին գրավիչ է արշավների, բույսերի դիտարկման, վայրի կենդանիների դիտման, ձիարշավի, հեծանվային արշավների եւ թռչնադիտարկման համար:

**Անցանելիություն՝** հեշտ անցանելի:

### **3. Երթուղի 3. Տուրիստական երթուղի Ախուրյան**

- Այցելուների կենտրոն (Ղազանչի համայնք)
- Աղվորիկ համայնք
- Ալվար համայնք
- Ախուրյան գետի կիրճ
- Զբոսաշրջային կենտրոն (Մեծ Սեպասար համայնք)
- Այցելուների կենտրոն (Ղազանչի համայնք)

Երթուղի 3-ի երկարությունը կազմում է 28.6 կմ:

**Անցանելիությունը՝** հեշտ անցանելի

#### **Երթուղի 3ա**

- Զբոսաշրջության կենտրոն (Մեծ Սեպասար համայնք)
- «Դարի սուրբ» մատուռ



- Զբոսաշրջության կենտրոն (Մեծ Սեպասար համայնք)  
Երթուղի 3ա-ի երկարությունը կազմում է 1.3կմ:

**Անցանելիությունը՝** հեշտ անցանելի

#### **Երթուղի 3բ**

- Զբոսաշրջության կենտրոն (Մեծ Սեպասար համայնք)
- Հանքային աղբյուրներ (Աշոցք համայնք)
- Զբոսաշրջության կենտրոն (Մեծ Սեպասար համայնք)

Երթուղի 3բ-ի երկարությունը կազմում է 2.5կմ:

**Անցանելիությունը՝** հեշտ անցանելի

Երթուղին գրավիչ է արշավների, բույսերի դիտման, վայրի կենդանիների դիտման, ձիարշավի, հեծանվային արշավի, նավարկության, ձկնորսության եւ թռչնադիտման համար:

#### **4. Երթուղի 4. Տուրիստական երթուղի «Արեւմտյան»**

- Այցելուների կենտրոն (Ղազանչի համայնք)
- Սեպասար համայնքի խաչմերուկ
- Սեւսար լեռան լանջեր
- Սարագյուղ համայնք
- Բավրա համայնք եւ երկու այլընտրանքային շարունակություն՝ հետ դեպի այցելուների կենտրոն Ղազանչի համայնք կամ Զավախեթի պահպանվող տարածքներ - Վրաստան (երթուղի 4ա)

Երթուղու երկարությունը կազմում է 32.1 կմ: Երթուղին գրավիչ է արշավների, բույսերի դիտարկման, վայրի կենդանիների դիտման, ձիարշավի, հեծանվային արշավի եւ թռչնադիտարկման համար:

**Անցանելիությունը՝** միջին և բարդ անցանելի:

### 3. Շուկան

#### 3.1 Առանձնահատկություն

Նախ և առաջ կարևոր է հասկանալ՝ ինչ է էկոտուրիզմը և ինչ տարբերություններ ունի սովորական զբոսաշրջության համեմատ:

Էկոտուրիզմը պատասխանատու շրջագայություն է, որը պահպանում է բնությունը և նպաստում տեղաբնակների կենսապայմանների բարելավմանը: Տուրիզմի ավանդական ձևերը կայուն չեն, հաճախ միտված չեն բնության պահպանությանը և ասոցացվում են մեծ հոյուրանոցների հետ, որը էկոտուրիզմի պարագայում բացակայում է:

Էկոտուրիզմով հետաքրքրված զբոսաշրջիկների համար շատ կարևոր է ինքնուրույն շրջագայելու հանգամանքը: «Brieu et al» 2011 թ-ին պարզել է, որ շրջակա միջավայրի հանդեպ հարգանքը գլխավոր մոտիվացնող գործոններից մեկն է էկոտուրիզմով հետաքրքրված մարդկանց համար: Բացի այդ, 2009 թ.-ին «Պրիմ-Ալլազը» նաև պարզել է, որ ճանապարհորդության և կարճ շրջագայության ընթացքում ուսումնական հնարավորությունների՝ (learning opportunities) առկայությունը նույնպես կարևոր նշանակություն ունի այս տեսակի ճանապարհորդների համար:

Կարևոր է նշել, որ այդ գնումները կատարելու համար խոչընդոտներ կան: Միջին վիճակագրական էկոտուրիստը շատ լավ պատկերացնում է գների ձևավորումը, տարբերակում է կեղծ գովազդը և ապատեղեկատվությունը<sup>2</sup>: Բացի այս, 1991-ին Լինդբերգը հայտնաբերեց, որ զբոսաշրջության համար երկրորդ խոշորագույն խոչընդոտը պարկերի կողմից սահմանափակումները, կանոնները և կանոնակարգերն էին, որոնք սահմանված էին հյուրերի համար և նպատակ ունեին պահպանել բնական միջավայրը:

#### 3.2 Գնորդներ

«Պրիմ-Ալլազը» նաև նշում է, որ էկոտուրիզմով հետաքրքրված զբոսաշրջիկները գների նկատմամբ զգայուն են: Նրանք լավ պատկերացնում են ծառայությունների գները և պատրաստ չեն ավել գումար վճարել կամ հարմարվել ուռճացված գների հետ:

Միջին վիճակագրական էկոտուրիստը պատրաստ է ավելի շատ գումարներ ծախսել, քան սովորական սպառողական զբոսաշրջիկը: Ընդհանուր առմամբ, էկոտուրիստը պատրաստ է ծախսել առնվազն 1500 դոլար մեկ մարդու համար, սակայն այդ ուղեորությունը կրում է ընդլայնված բնույթ, հաճախ 14 օր կամ ավելի (HLA / ARA 1994): Պետք է հաշվի առնել նաև, որ նույն ուսումնասիրությունը ցույց է տվել, որ էկոտուրիստների 1/4-ը պատրաստակամություն է հայտնել մեկ անձի համար ավելի քան 2000 դոլար ծախսել էկոհամակարգում:

Այնուամենայնիվ, կան նաև էկո զբոսաշրջիկների այլ տեսակ՝ «կայուն արկածախնդիրը», ինչպես նաև նշել է «Պրիմ-Ալլազը»: Այս տեսակի մարդիկ գերադասում են ռիսկը տանը մնալու հետ համեմատած և ավելի շատ գերադասում են հեռավոր և երկարատև ճանապարհորդություններ, որոնց ընթացքում նրանք կարող են բացահայտել նոր վայրեր:

<sup>2</sup> Lecompte et al., 2011 ; Boivin et al., 2011 ; Durif et al., 20 11

Երեք տարբեր հետազոտություններ<sup>3</sup> ցույց են տվել, որ Էկոտուրիզմով զբաղվելու պատճառը և մոտիվացիան սոցիալական և միջավայրի համար առկա օգտակարությունն է: Նաև կարևոր գործոններից նշվել է բնության առողջ միջավայրի պահպանության գործոնը:

«La Barometer» -ը (Քվեբեկ 2011) նշել է, որ Էկոտուրիստական ապրանքների ընտրություն կատարելու համար կան վեց պատճառներ, սակայն կան նաև վեց խոչընդոտներ:

Վեց շարժառիթներն են՝ շրջակա միջավայրը, հասարակությունը, առողջությունը, անձնական իմիջը, սոցիալական իմիջը եւ ապրանքի դիզայնը կամ ոճը:

Վեց խոչընդոտներն են՝ գինը, ընդհանուր տեղեկությունները, հավաստագրերի մասին տեղեկությունը, արդյունավետությունը, ժամանակը վատնելու վախը և ապրանքի դիզայնը կամ ոճը:

Խոչընդոտների և շարժառիթների լավագույն նկարագրություններից մեկը 2013թ. -ին «Carvajal»-ի կողմից իրականացված հետազոտությունն էր, որը պարզել է, որ Էկոտուրիզմով զբաղվելու գլխավոր շարժառիթներն են՝ բնության հետ անմիջական շփումը, սովորելու հնարավորությունը (այցելվող վայրերի բնաշխարհի, մարդկանց, ֆլորայի և ֆաունայի մասին), կենսաբազմազանության պահպանությունը, ֆիզիկական մարտահրավերները, անսովոր ուղևորությունները և անձնական, սոցիալական իմիջը:

Խոչընդոտների մեջ առաջնահերթ նշվում է ֆիզիկական ռիսկը՝ կյանքին կամ առողջությանը վնաս: Բացի այս, Ծառայությունների բնութագրերի, բնապահպանական եւ սոցիալական օգուտների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը քիչ հավանական է դարձնում Էկոտուրիզմի ծառայությունների ընտրությունը: Տեղեկատվության բացակայությունը նաև կարող է ավելացնել ֆիզիկական ռիսկի նկատմամբ վախը:

Էկոտուրիստի միջին տարիքի մասին հստակ հետազոտություն չկա: «Boo»-ն (1990), «Backman and Potts»-ը (1993) և «Eagles եւ Cascanette»-ը (1995) պարզել են, որ Էկոտուրիստը ավելի մեծ է, քան ձեր միջին վիճակագրական զբոսաշրջիկը: Մինչ «Yuan եւ Moisey»-ը (1992) եւ «Chudintra»-ը (1993) գտնում էին, որ նրանք ավելի երիտասարդ են, քան միջին վիճակագրական զբոսաշրջիկը: «Fennel եւ Smale»-ը (1992) կարծում էր, որ Էկոտուրիստների միջին տարիքը 54 տարեկան է:

«Eagles եւ Cascanette»-ը նաև գրում է, որ «փորձառու» Էկոտուրիստը մի փոքր ավելի տարիքով է, քան ձեր միջին զբոսաշրջիկը (Էկոտուրիստների 56% -ը 35-ից 54 տարեկան է, իսկ ավանդական զբոսաշրջիկների համար համանման ցուցանիշը 25-ից 44 տարեկան է):

«Tourism Canada»-ն պարզել է, որ տարիքը որոշիչ գործոն է Էկոտուրիստների կողմից ծառայությունների ընտրության հարցում:

Այսպիսով, բարձր տարիքի Էկոտուրիստները հակված են ավելի հանգիստ ծառայություններից օգտվելուն՝ զբոսանքներ, կենդանական և բուսական աշխարհի դիտումներ: Ավելի երիտասարդները հակված են օգտվել ավելի արկածային և մարտահրավերներ պարունակող ծառայություններից, ինչպիսիք են սառույցի կամ ժայռի բարձրացումը, էքստրեմալ թիավարությունը, կանոնավարությունը կամ սկուբա դայվինգ:

Հետազոտական աղբյուրների մեջ չկա հստակ կոնսենսուս Էկոտուրիստների սեռի վերաբերյալ: Կան հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ Էկոտուրիստների

<sup>3</sup> Lecompte et al., 2011 ; Boivin et al., 2011 ; Durif et al., 20 11

գերակշիռ մասը տղամարդիկ են, և կան հետազոտություններ, որոնք ցույց են տալիս հակառակը, սակայն գերադասելին այն է, որ էկոտուրիստների սեռային կառուցվածքը հաշվելիս ընդունենք նույն հարաբերակցությունը, ինչ երկրագնդի վրա է սեռային հարաբերակցությունը:

Այնուամենայնիվ, որոշակի գործողությունների համար կան որոշակի նկատելի տարբերություններ տղամարդկանց եւ կանանց մասնակցության մակարդակներում:

Օրինակ, տղամարդիկ ավելի մեծ տոկոս են կազմում ճամբարներով եւ հեծանվավազքով հետաքրքրված էկոտուրիստների մեջ, բայց արշավների և թիավարության մասնակիցների մեջ գերակշռում են կանայք: Կարելու է նշել, սակայն, որ անհավասարությունը երբեք չի գերազանցում 10% -ը:

Հասանելի գրականությունը համակարծիք է, որ էկոտուրիստը ավելի լավ կրթված է, քան միջին զբոսաշրջիկը: Որոշ գնահատականների համաձայն էկոտուրիստների 65%-ը համալսարանական աստիճաններ ունեն, իսկ «փորձառու» էկոտուրիստների, պարագայում այդ ցուցանիշը հասնում է 81% -ի («Eagles and Cascanetti» 1995): Այս միտումներից էլնելով՝ ինելամիտ կլինի ավելի շատ տեղեկատվություն տրամադրել այն տարածքների մասին, որոնք հնարավոր է այցելել: Տիպիկ էկոտուրիստը ցանկանում է ավելին իմանալ մի վայրի մասին, քան սովորական սպառողը:

Ինչ վերաբերում է ուղեւորության տեւողությանը, ապա այն ավելի շատ կախված է առաջարկվող ծառայություններից, սակայն պետք է ի գիտություն ընդունել, որ էկոտուրիստը ավելի շատ ժամանակ է ծախսում, քան սովորական տուրիստը:<sup>4</sup>

### 3. 3 Մրցակիցներ

Աշխարհագրական դիրքի և լճի առկայությամբ պայմանավորված՝ հիմնական մրցակից կարելի է ընդունել Սևանա լիճը, սակայն Արփի լիճը և ազգային պարկը իրենց առանձնահատկություններից էլնելով չեն մրցակցում Սևանա լճի հետ, քանի որ այնտեղ հիմնականում տարածված են լճային տուրիզմի ավանդական ուղղությունները, իսկ Արփի լճում այդպիսի ծառայությունների մատուցումը կամ անհնար է, կամ նպատակահարմար չէ:

Հայաստանում էկոտուրիզմի գոտիները մի քանիսն են՝

1. Լաստիվեր,
2. Կալավան,
3. Դիլիջան, մասնավորապես Տրասնկովկասյան արահետ:

Ինչ վերաբերում է ազգային պարկերի, արգելոցների և արգելավայրերի կողմից առևտրային գործունեության իրականացմանը, կարելի է ասել, որ նրանց մոտ հմտությունները և կարողությունները այնքան էլ լավ զարգացած չեն: Խորքի մեջ նրանցից ոչ մեկը նման գործունեությամբ չի զբաղվում

### 3. 4 Շուկայի վերլուծություն

Շիրակի մարզում եւ հանրապետության տարածքում տուրիստական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների, անհատների եւ «Արփի լիճ» ազգային պարկի աշխատակիցների հետ քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ

<sup>4</sup> Parker, 1993. Nababan and Aliadi, 1993. Backman and Potts, 1993. ARA Consulting, 1991. Yuan and Moisey, 1992

այցելուներին գրավող նախադրյալները եւ այցելուների շրջանակը տարբեր են: Ուշադրություն է դարձվել նաեւ համացանցում հրապարակված լուսանկարների եւ տեսանյութերի աշխարհագրությանը:

Միջին տվյալներով տարվա ընթացքում 800-ից 1000 այցելու է գալիս այստեղ: Որոշ դեպքերում թիվը կարող է եւ ավելին լինել, քանզի այցելուների մի մասը շրջանցում է այցելուների կենտրոն այցելել եւ ազգային պարկի աշխատակիցների համար դժվար է գրանցամատյանում նշել բոլոր այցելուներին: Հատկապես մի քանի արշավական խմբեր իրենց սեփական երթուղով են շարժվում՝ այդպես էլ այցելուների կենտրոն չայցելելով Պաղակն համայնքում:

Օտարերկրյա այցելուների թիվը ընդհանուր այցելուների համեմատ կազմում է 10-ից 15 %: Հիմնական մասը՝ գերմանախոս: Մա պայմանավորված է նաեւ «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման գործում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության ֆինանսական աջակցությամբ (Գերմանիայի վերակառուցման եւ զարգացման բանկ- KFW), ինչն իր հերթին ենթադրում է գերմանացի տուրիստների շրջանում «Արփի լիճ» ազգային պարկի մասին տեղեկացվածություն:

Հենածվային եւ մոտոարշավորդների մեծ մասն օտարերկրացիներ են: Նրանց մեջ շատ քիչ տոկոս են կազմում հայ հեծանվորդներն ու մոտոարշավորդները:

Քայլարշավով եւ ավտոստոպով ճամփորդող այցելուների մեծ մասը եւս օտարերկրացիներ են, ովքեր հիմնականում փնտրում են իրենց ճանապարհներին գեղեցիկ ու հարմարավետ վրանակայաններ՝ հաճելի ճամփորդություն ունենալու համար:

Դրական ազդեցություն ունեն նաեւ «Արփի լիճ» ազգային պարկի հարակից համայնքներում բնակվող բնակիչները, ովքեր իրենց ազգակցական եւ գործնական կապերն օգտագործում են իրենց համայնքներ այցելուներ բերելու նպատակով:

Միրողական հեծանվասպորտի ֆեդերացիայի, առողջ ապրելակերպին միտված փողոցային մարմնակրթական շարժման՝ Street Workout, եւ տարբեր բնապահպանական ու բարեգործական կազմակերպությունների կողմից տարածքը դիտարկվում է որպես այլընտրանքային հարթակ՝ միջոցառումների կազմակերպման եւ հանգստի կազմակերպման համար:

Կրթական հաստատություններում սովորող երեխաների եւ ուսանողների համար տարածքը ծառայում է կրթադաստիարակչական միջավայր եւ պարբերաբար ազգային պարկի աշխատակիցները ներգրավված են ճանաչողական միջոցառումների կազմակերպմամբ:

Նկատելի է, որ հանրապետության տարբեր բնակավայրերից դեպի «Արփի լիճ» ազգային պարկ այցելուների հոսքն ավելի շատ անհատական մակարդակով է կազմակերպվում, քան տուրիստական կազմակերպությունների պլանավորած արշավների ձեւաչափով:

Չնայած տարբեր բնույթի հանգիստ նախընտրող այցելուների բազմազանությանը՝ հիմնական այցելուների կեսից ավելին միջին կամ միջինից բարձր տարիքի մարդիկ են:

Այցելուների համար գրավիչ են տեղի բուսական, կենդանական աշխարհի բազմազանությունն ու թռչնադիտարկման հնարավորությունը, հեռավորությունն աղմկոտ քաղաքներից ու տեղում հանգիստը լիարժեք կազմակերպելու հնարավորությունը: Հատկապես շոգ եղանակներին տեղի գով եղանակը եւս գրավիչ է շատ ու շատ այցելուների համար: Հատկանշական է, որ շատ ու շատ ձկնորսներ իրենց ժամանցը կազմակերպելու

համար բարձրանում են Ախուրյան գետի վերին հոսանք՝ տարբեր տեսակի ձկներ որսալու համար:

### 3. 5 Թիրախային շուկաներ

Թիրախային շուկայի ծավալների սահմանման համար առկա են որոշակի խոչընդոտներ: Դա կապված է թվային տվյալների բացակայության հետ, սակայն թիրախային սպառողների նկարագիրը կազմելու համար կատարվել են որոշակի հետազոտություններ, որին կարող եք ծանոթանալ 3. 1 և 3. 2 կետերում: Այսպիսով թիրախային շուկայի մեջ մտնող մարդկանց նկարագիրը առկա է, սակայն թվային հաշվարկների համար անհրաժեշտ է լրացուցիչ ավելի մեծ հետազոտություն:

### 3. 6 Մարքեթինգային ռազմավարություն

Հետազոտական տվյալների համարդրմամբ պարզ է դառնում, որ Արփի լիճը ունի մեծ զբոսաշրջային պոտենցիալ, որը պետք է հասանելի դարձնել համապատասխան թիրախային լսարանին: Այս ամենի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի գործողությունների ամբողջականության իրականացում:

Գործողությունների իրականացման նպատակը «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ունեցած հնարավորությունների հանրայնացման միջոցով զբոսաշրջիկների հոսքի ավելացումն է:

Այս նպատակին հասնելու համար սահմանված են հետևյալ խնդիրները:

1. Պարկի մասին տեղեկացվածության բարձրացում:
2. Մատուցվող ծառայությունների և ծառայությունների փաթեթների կատարելագործում և լավայնացում:
3. Թիրախային լսարանի հետ հաղորդակցության մակարդակի բարձրացում:
4. Պարկի տարածքում առակ բնակչության հետ հաղորդակցության և համագործակցության բարձրացում:
5. Մասնավոր հատվածի և պարկի միջև երկարաժամկետ համագործակցության հաստատում:

Նշված խնդիրներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները:

#### Խնդիր 1

- Տեղեկատվության վերջնամշակում,
- Տեղեկատվական թերթիկների պատրաստում,
- Թվային ռեսուրսների օգտագործում, մասնավորապես սոցիալական ցանցերում, տուրիստական հավելվածներում պարկի պատշաճ ներկայացում,
- Կայքի գործարկում և պարբերական թարմացում,
- Տուրիստական գործակալություններին տեղեկատվության պարբերաբար ուղարկում:

#### Խնդիր 2

- Ծառայությունների սկզբնական փաթեթի սահմանում,
- Սկզբնական փաթեթի համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերում,
- Առկա ծառայությունների թեստավորում,
- Որակի վերահսկողություն սպառողների կարծիքի (consumer review) հիման վրա,

- Նկատված թերությունների վերացում և նոր թեստավորում,
- Որակի մշտական վերահսկողություն:

### Խնդիր 3

- Թիրախային լսարանի հստակեցում,
- Թիրախային լսարանի նկարագրության կազմում,
- Թիրախային լսարանի տվյալների բազայի հավաքագրում,
- Տվյալների հիման վրա կապի գործիքների օգտագործում (email marketing, etc.),
- Թարմ և օգտակար տեղեկատվության տարածում:

### Խնդիր 4

- Տարածքի բնակչության կարողությունների քարտեզագրում,
- Քարտեզագրված կարողությունների ներգրավում պարկի ծառայությունների ցանկում,
- Բնակչության հետ դասընթացների կազմակերպում զբոսաշրջիկների սպասարկման հետ կապված,
- Բնակչության աջակցման ծրագրերի իրականացում:

### Խնդիր 5

- Բիզնեսների հետ աշխատանքի ներքին սկզբունքների մշակում,
- Տարածքի և ենթակառուցվածքների վարձակալության կանոնակարգի մշակում,
- Պոտենցիալ ներդրողների տվյալների բազաների կազմում,
- Թիրախային աշխատանք պոտենցիալ ներդրողներ ներգրավելու ուղղությամբ,
- Ստեղծված բիզնեսների աջակցության փաթեթների կազմում:

## Եզրակացություն

Պարկի կողմից առաջարկվող ծառայությունները պետք է բաժանված լինեն հիմնականում երկու մասի՝

- պարկ տուրիստներ ներգրավվող ծառայություններ,
- պարկի տարածքում տուրիստների ժամանցն ապահովող ծառայություններ:

Երկրորդ տեսակի ծառայությունները ավելի շատ պետք է ուղղված լինեն ակտիվ և հազեցած օրվանից հետո մարդկանց երեկոյան հանգիստը ապահովելուն: